



ԵՐՐՈՐԴ ՏԱՐԻ

ԹԻԻ 85

8 ՄԱՐՏ 1913

ԿՐՕՆԱԿԱՆ ԳԻՏԱԿԱՆ ԵՒ ՏԵԼԵԿԱԳՐԱԿԱՆ

ՇԱՐԱԹԱԹԵՐԹ

ՀԱՅ ԿԱԹՈՂԻԿԷ ՊԱՏՐԻԱՐԺԱՐԱՆԻ

մէջ, այլ և ոչ մի հասարակութեան մէջ տեղի ունեցած է: Եւ ինչպէս կը համարձակին այդ բռնաբարեալ իշխանութիւնը իբրեւ այն ցուցադրել Ս. Աթոռոյ առջեւ:— Բայց արդեօք որդիական յարգանք մը ընելու համար այս հեռագրի որոշողութիւնը տուած են: Յիրաւի՝ հիմնալի՝ յարգանք: Զիշեցի՞ն թէ՛ Քահանայապետական Դերագոյն Իշխանութեան դէմ իրենք ըմբոստացած են. թէ՛ նա ինքն այս Քահանայապետան Պիոս Ժ.ն է որ զիրենք, իբրեւ ժողով, ապօրինաւոր եւ հերձուածող հրահարակած է, եւ բանադրած է: Եթէ ասոնց կարեւորութիւն չեն տար, ինչո՞ւ զիրենք Կաթողիկէ կ'անուանեն և Քահանայապետին յարգանք ընելու կ'ելլեն. գործքով կը նախատեն, կ'ուրանան, և զբոլով յարգել կը կարծեն: Իսկ եթէ Անո՛ր պատիժները բանի տեղ կը դնեն, ինչպէս պէտք է ընէ ո՛ր և է Կաթողիկէ, ապա ուրեմն ինչո՞ւ չեն խորհիր որ այսչափ ժամանակ հետտութիւն Քրիստոսի Փոխանորդին դէմ, ինքնին արդէն մեծ մեղք է անհնազանդութեան և գայթակղութեան: Չեն խորհիր թէ՛ Ս. Քահանայապետին՝ Պիոսի Ժ.ի ճանչցած և պարտադրած Կաթողիկոսը իբրեւ Կաթողիկոս մերժեցին. Անոր դրած Նախկուպոսները արհամարհեցին, վնասեցին, խոշտանգեցին, աշխարհական իշխանութեանց և սինլքորին մատնեցին, Քրիստոսատուր Նախկուպոսական իշխանութիւնը ծաղր ու ծանակ և կոխան ոտից ընելով: Չէ՞ն խորհիր բնաւ թէ՛ իրենք են որ Քահանայապետական Իշխանութիւնը խաղք խայտառակ ըրին ամբողջ Արեւելքի մէջ, Հերետիկոսաց ու Հերձուածողաց առջեւ, իրենց բացարձակ անհնազանդութեամբ, հետտութեամբ, ըմբոստ մեկնաբանութիւններով, Ս. Պապը հրատարակելով իբրեւ մէկը որ ըրածը չի գիտեր, որ տուած վճիռներուն մէջ կը խաբուի, որ մեր հասարակութեան չարիք կը նիւթէ. իրենց պաշտօնական թերթին մէջ Ս. Պապը նախատեցին, դատափետեցին, խրատեցին, անոր տուած վճիռները ոչինչ հրատարակեցին, և հիմա, ո՞ր կրթութեան սկզբունքով, ո՞ր որդիական գութով,

ո՞րպիսի հրամայեալ պատկառանք ցաւակցութիւն հեռագրելու կ'ելլեն, ո՛չ միայն իբր հաւասար առ հաւասար, այլ և իբր բարձրագոյն իշխանութիւն մը որ կը դառնէ և ուղածը կը մերժէ, ուղածը կ'ընդունի. կ'ուզէ կը նախատէ, կ'ուզէ կը յարգէ: Անիմանալի՛ Կաթողիկէութիւն: Նոյնպէս յառաջ եկած բոլոր չարեաց իբր սկզբնապատճառ՝ իրենք են պատասխանատու: Ինչո՞ւ չեն խորհիր որ դեռ նոր ի նորոյ դատապարտութեան դուլներ կը ստեղծեն. կը գրաւեն Եկեղեցւոյ ինչքերը. Կաթողիկէութեան առաջին օրէն ի վեր՝ յարգուած Եկեղեցական այդ կանոնները կը բռնադատեն, կ'ոտնակոխեն. իրենց քանիցս ըսուած ըլլալով հանդերձ թէ Ս. Եկեղեցին աս յանդգնութեան համար ծանրածանր պատիժներ սահմանած է: Ասոնք ընել. Ս. Քահանայապետը յարգելու ելլել. իբր թէ ժողովուրդին ցուցադրելու համար իրենց եռանդը... Ինչ հակասութիւն. ասոնք բոլոր ընել Ս. Քահանայապետին դէմ: Եւ հիմա՛ փոխանակ մեղալի նոր անարգանքով մը մօտենալ այդ բարեգութ Հօր. Աւետարանը այսպէս չհրամայեց: Մի՞թէ նախատելով պիտի մխիթարեն անոր ցաւագին սիրտը, նոր վէրք մը պիտի աւելցնեն անոր վրայ, իրենց ըմբոստութեան յիշատակը նորոգելով, ամէն սոսկալի պարագաներով և արդիւնքներով: Համբուրելով մատնես... Ծաղրանք է այդ և ոչ յարգանք. թշնամանք է այդ և ոչ սփոփանք. մոլորութեան յամառութիւն է այդ. յուսահատ ճիգ մը՝ ինքնախաբ ամբարտաւանութեան, զոր չէր արժեր անշուշտ Կաթողիկէ աշխարհի առջեւ ցուցադրել անպատկառ: Փոքր ինչ տրամաբանութեամբ, ինչայելուէին՝ եթէ ոչ իրենց, գո՛նէ՛ Վատիկանու Ծերունազարդ Հովուապետին, որ ուրիշ գիմուս կը սպասէ իրենցմէ... մխիթարուելու համար:

2. Մեկմուտ առիթ առնելով Զատիկի տօներուն մօտենալը, նորանոր զրգոթութիւններու շարք մը սկսած է, անպատճառ խռովութիւններ և ցաւալի արկածներ յառաջ բերելու համար: Անցածները կը յիշէ՝ իբրեւ

թէ ցաւելով . նորիւրուն կարելիութիւնը կը կրկնէ , կ'երեւոյնէ , կը յեղյեղէ անդադար . կը պնդէ թէ՝ պէտք չէ ենթադրել թէ անոնք այլ ևս չեն կրկնուիր . այլ մանաւանդ գրեթէ ստոյգ է թէ պիտի կրկնուին : Ինչպէս կ'ըլլայ գրգռութիւնը : Մանաւանդ թէ այս տեսակ կարելիութեան իբր պատճառ ցոյց կու տայ Նոր-Տոմարի հրատարակութեան ապօրինաւորութիւնը (?!), որով և զԹերզեան (իւ ոճն է) կը գատափետէ , կը դատապարտէ , կը վճռէ , կ'պնծէ : Ինչպէս կ'ըլլայ գրգռութիւնը : Գիրքն է որ կը խօսի : Մի՛ հաւատաք այն կոկորդիլոսական արցունքներուն , որոնցմով կարծել կու տայ թէ կը դատապարտէ այդ քստմնելի արարքները . ո՛չ , մի՛ հաւատաք : Քանզի ինքն էր որ Եկեղեցեաց բակերուն մէջ ճառախօսեց , Վարչականի իր նման ընկերաց հետ , գրգռելու համար իրենց համախոհները , խորաններու առջեւ քահանայից վրայ յարձակելու և կոնզակներ պատռելու . ինքն էր որ իր նմաններուն հետ գրեթէ միշտ ներկայ գտնուեցաւ այս ամբողջաւորութեանց , ինքն էր որ անդադար յօդուածներ գրեց՝ չարերը մղելու համար այդ տեսակ ապօրինութեանց , մինչև իսկ ասպարէզ կարդալով կիներու . ինքն էր որ ապերազան , լիբր և անարժան յօդուածներ և ոտանաւորներ հիւրասիրեց այդ մուրաբիթի մէջ . ինքն էր որ անխիղճ և առանց Աստուծոյ երկիւղին այնպիսի հայհոյակից գրութիւններ հրատարակեց , որոնք թոյն կը սփռէին Յիսուսի ամենասուրբ ու երկրպագելի Սրտին , Անոր Ս . Չարչարանաց Պատկերներուն դէմ , և ին . մինչև հիմա , երբ նաեւ Նոր-Տոմարի խնդիր չկար դեռ , կատարուած անլուր սրբապղծութիւնները այս կերպ գրգռութիւններով սարքուեցան . և հիմա ալ դեռ չի դադարի նորանոր գրգռութիւններ ընել առ սրբապղծութիւն : Պատասխանը Աստուծոյ պիտի տայ . մենք կ'ազօթենք որ՝ ուր ուրեմն զգաստանայ . զի անկէ է հեղ Փրկչին բարկութիւնը :— Եւ կը համարձակի լոյս աշխարհի առջեւ գրելու թէ Նոր-Տոմարի առթիւ յառաջ եկած բոլոր ցաւալի արարքներուն , նաև տուճ-օրհնէմքի առ-

թիւ քահանայից դէմ եղած մերժումներուն վրայ ոչ ոք գոհ մնացած է . և թէ Վարչ . Ժողովը Եկեղեցւոյ մէջ գործուած արարքները դատապարտեր է եղեր (?!). . . . Տէր Աստուած , անհանդուրժելի է այդքան ստախօսութիւն : Հապա՛ Վարչական ըսուածը չէ՞ր որ Նոր-Տոմարի Կաթողիկոսական Կոնզակին դէմ Յայտարարութիւն տպել տուաւ , բաշխեց , Եկեղեցեաց բակին մէջ փակցուց , մինչև իսկ , ամօթ նախատանաց , յափըչտակուած Կաթողիկոսարանի արտաքին դրան վրայ ևս . . . ի ծանական աղագաց և ազանց : Հապա՛ ինքը Մէճմուան չէ՞ր որ ամենայն յաւակնութեամբ յորդորեց մերժել Նոր-Տոմարը , չընդունիլ քահանաները . ցանկը բացաւ .— և հաճութեամբ !— չընդունողներուն , գովելով զանոնք : Հապա՛ այդ Վարչական ըսուածին անդամները չէին Շ . և Մ . և . . . էֆ . ները , որոնք պարագլուխ կեցած էին Եկեղեցւոյ սրբապղծ յարձակումներուն . Հապա՛ Գլխաւորները . . . չիք ինչ ծածուկ որ ոչ յայտ լիցի : Մնացած ինչ ինչ արդիւնքներն ալ որո՞ւ պէտք է ուրեմն վերապրել : Մինչև յարդ պատահած ապօրինութեանց և խայտառակութեանց ուղղակի և անուղղակի սկզբնապատճառը իրենք են միայն :

Վերջացնենք . ուր չարունակեալ անհրահանգութիւն կայ Եկեղեցական բարձրագոյն Իշխանութեան դէմ , հոն կայ յամառութիւն , պայթակղութիւն , մոլորութիւն և ամէն յաւալի հետեւանք . որոնցմէ խորշիլ ուղողը պէտք է պատճառը վերցնէ , անկեղծօրէն և զգաստօրէն մօտենալով այն Հօրը , որ ան ատեն յիրաւի մոռնալով անցեալը , պիտի գրկէ գորովալիբ խանդաղատանօք , և պիտի հրամայէ մարդոց և հրեշտակաց՝ Ուրախ լինել :

Ք Ա Ր Ո Ջ ՅԻՍՈՒՍԻ ԶԱՐԶԱՐԱՆԱՅ ՎՐԱՅ

(Շար.)

Ահա՛ աշխարհի Փրկիչը՝ մատնիչի մը և խումբ մը կատաղիներու ձեռքը ինկած . հոս կը սկսի իր նշաւակութեանց հրապարակական պատմութիւնը : Զինքը կը բռնեն , կը կապեն , կը կաշկանդեն , քաշկռտելով կը տանին չարագործի մը պէս : Պետրոս առջի բերան՝ զինքը պաշտպանելու դիւք մը կ'առնու . և Փրկիչը , անոր հրամայելով որ սուրը տեղը դնէ , մեկի կը սորվեցնէ թէ իր՝ Եկեղեցւոյ տալու զէնքերը հոգեւոր են . թէ համբերութիւնը , աղօթքը , սրբութիւնը՝ իր պաշտօնեաներուն ամենէն ապահով ամբողջութիւններն են . թէ ինք կարող է թէեւ հրեշտակներու գունդերով կռուիլ իր թշնամիներուն դէմ , սակայն կը շատանայ անոնց համար աղօթելով . թէ իր Վարդապետութիւնը ծաւալելու և հաստատուելու է միայն սիրոյ , հեղութեան և խոնարհութեան սկզբունքներով զորս կ'ուսուցանէ . և թէ վերջապէս մեր ձեռքը տուած սուրը սահմանուած է ջնջելու կիրքերը և ոչ թէ մեղաւորները : Ուստի Պետրոս մէկէն ուժէ կ'իյնայ . անխորհուրդ և քահայքոս եռանդը հաստատուն չի մնար . և առաջին վտանգը կը յայտնէ միշտ անոր պատրանքը և անզօրութիւնը . արդէն այլ ևս միայն հեռուէն կը հետեւի իր աստուածային Տիրոջ , զոր այդ լիւր խմբակը կը քաշէ կը տանի Քահանայապետին առջեւ . և ահա՛ ցուցամոլ եռանդն ու արիութիւնը մեծեղեան երկչոտութեան մը յանգելու վրայ են : Մարդս ընդ երկար չի հետեւի Յիսուսի , երբ այլ ևս միայն հեռուէն և քաշկռտուելով կ'երթայ անոր ետեւէն . քահայքը , բնական բերումը եռանդի տեղ դնելէն վտանգաւոր բան չկայ . մարդ կը կարծէ թէ Յիսուսը կը պաշտպանէ , բայց իրօք ինքզինքը գոհացնելու կը ջանայ . և ճշմարտութեան անխորհուրդ վրէժխնդիրները՝ երբեմն իրեն դէմ աւելի կ'անիրաւին իրենց գայթակղութիւններով և անկումներով քան իր թշնամիները իրենց ապստամբութեամբ :

Արդարեւ արդէն իսկ կը լսեմ որ այդ խեղճ ու տկար աշակերտը Կայիափայի տան մէջ կը յայտարարէ բարձրաձայն՝ Յիսուսը չճանչնալը . կին մը զինքը կը սասանեցնէ , պարզ հարցում մը զինքը ուրացող և դրուժան կ'ընէ . մինչեւ երեք անգամ կը հաւատաւ իր Յիսուսի աշակերտ չըլլալը . և ա'յն՝ իր ամենարարի , կապուած , վշտահար , ծաղրուած , զրպարտուած Տիրոջ աչքին առջեւ . անոր շղթաներուն վրայ կ'աւելցնէ այս նոր ցաւը : Աստուած իմ , ի'նչ անկում . առաջին հովիւը , Եկեղեցիներու սինը , Թըլփատութեան առաքեալը . նոյն ինքն Յիսուսէն երջանիկ կոչուած աշակերտը , և որուն Երկնաւոր Հայրը յայտնած էր Քրիստոսի Խորհուրդը :

Պետրոս , երբ հօտին գլուխն անցած կը խօսի յանուն միւս բոլոր աշակերտներուն , կը խոստովանի վեհանձնօրէն զՅիսուս . բայց կ'իյնայ՝ երբ կը մնայ մինակ և հեռու հաւատացեալներէն , զորս կազդուրելու , ժողովելու , քաջալերելու էր այս տխուր պարտագային մէջ : Հովիւները՝ իրենց ոչխարներէն շրջապատուած տոբնին միայն ապահովութեան մէջ են . անոնցմէ կը պահպանուին ինչպէս իրենք զանոնք կը պահպանեն : Երբ անոնցմէ հեռանան , զանոնք թողուն երթան , ամէն բանէ վախճալու են . հօտին մէջ եղած տոբնին Տէրը իրենց ուժ կու տայ , լոյսով կը լեցնէ , օրհնութեամբ կը զեղու . որովհետեւ հոն է որ կը նկատէ զիրենք իբրեւ իր պաշտօնեաները , հոն է որ խոստացեր է իրենց թեւ թիկունք ըլլալ իրենց պաշտօնին դժուարին գործքերուն մէջ : Այլուր՝ այլ ևս զիրենք չի ճանչնար . այլ ևս տկար մարդիկ են , հասարակ , անզօր , անհաստատ , առանց արժանապատուութեան . և ըստ որում հոն անօգուտ են իր Եկեղեցւոյն՝ ինքն ևս այնուհետեւ իրենց անտարբեր աչքով կը նայի . իրենց պարտքերը եղող գործքերը , են նաեւ իրենց բովանդակ ապահովութիւնն ու զօրութիւնը :

Բայց այսքան վատ անկում մը՝ Յիսուսի սիրտէն չի հաներ այդ անհաւատարիմ աշակերտը . դեռ ևս զանիկայ արժանի կը տեսնէ

իր ակնարկներուն . և հակառակ քահանայից
զրպարտութիւններուն , առտ վկայից նեն-
գուպատիր զրոյցներուն , զինք թշնամանող
սրբապիղծ մարգոց անարգանքներուն , իր
մահը պահանջող ամբոխին խառնաշփոթ ա-
ղաղակներուն , քաղցրութեամբ ու բարու-
թեամբ զեղուն ուշադրութեամբ մը կ'որոնէ
տկար աշակերտը , կը սեւեռէ անոր վրայ իր
աստուածային աչքերը , և համար լեզուով մը ,
որուն շատ աւելի սրտաշարժ հանգամանք մը
կու տային իր նշաւակութիւնները . ա՛յդ է ու-
րեմն , կ'ըսէ անոր , հաւատարմութիւնը . զոր
այնչափ անգամ երգմամբ խոստացար ինծի .
ես կրցայ զքեզ հաստատ բռնել ալիքներու
վրայ , խեղճ աշակերտ , և զքեզ պատուա-
րել հովին և մորիկին բռնութենէն , վախ-
ցա՛ր թէ ես զքեզ մարգոց բովանդակ իշխա-
նութեան զէմ պաշտպանելու ուժ չունիմ .
քո անկումը աւելի կորանքի մատնեց զիս
քան ան բոլոր անարգանքները որոնց նշա-
ւակ կը տեսնես զիս . քիչ մը առաջ երգու-
մով հաստատեցիր որ զիս չես ճանչնար , ա-
պերա՛խտ . բայց ես դեռ զքեզ կը ճանչնամ .
զքեզ կը նկատեմ Եկեղեցւոյս Գլուխ և ոչ
խաբներուս հովիւ . տակաւին կը սիրեմ ըզ-
քեզ՝ հակառակ քու անարժանութեանդ և այդ
աչքերէդ հոսող արցունքները արդիւնք են
քեզի նկատմամբ ունեցած սիրոյս և միան-
գամայն քաւութիւն ջու յանցանքիդ :

Անարգանքին գործունի ու մոռցուիլը
մէկ կ'ըլլայ . Եւ քանի՜ անգամ արդեօք ո-
ճիրին մէջէն ելլելնուս պէս Յիսուս մեր վը-
րայ ձգեց , ինչպէս այս անհաւատարիմ աշա-
կերտին վրայ , գթութեան ակնարկ մը , յու-
ղեց մեր սրտին մէջ բուռն և դառնակսկիծ
խղճի-խայթեր աչքերնիս բացաւ մեր կեան-
քին վատթարութեան վրայ , և թերեւս մե-
զի՛ արցունք թափել տուաւ համակելով զմեզ
վշտով , տխրութեամբ և մեր անձին նկատ-
մամբ դժգոհութեամբ : Բայց այդ ամէնը վա-
ղանցուկ արցունքներ եղան , վայրկենական
զգացումներ , տխրութիւն աւելի անճառախ-
բութենէ : քան մեղքի ատելութենէն յառաջ
եկած . կը վշտագին մարդիկ զգայական հա-
ճոյից մէջ երջանկութիւն գտնել չկարենալ :

նուն թագուն ցաւի մը հետեւանքով . կը
փափաքէին ոճիրին մէջ գտնել երջանկու-
թիւն և հանգիստ , և չգտնելնուն համար կը
տխրին . կը դժկամակին՝ անօրէնութեան մէջ
հաստատ և անսասան կացութիւն մը ձեռք
բերել չկարենալնուն համար . տաղտուկ ու
յափրանք կը զգան իրենց անհանգստու-
թիւններէն և ոչ թէ իրենց անկարգութիւն-
ներէն . կը զգածուն եղեռնաւոր հեշտու-
թեանց ունայնութենէն և ոչ թէ զզուելիու-
թենէն և ապօրինաւորութենէն . և տժգոհու-
թիւն կ'ունենան , ոչ եթէ Աստուծոյ թշնամի
ըլլալնուն այլ իրենք իրենց բեռ ըլլալնուն
համար : Ահա այսպէս կը լրանայ այսօր մար-
գոց չարութիւնը Փրկիչը մատնող կամ ու-
րացող ու լքող աշակերտներուն ապերախտու-
թեամբը :

Բայց երկրորդ՝ կը լրանայ դարձեալ զինք
դատաւարտող քահանաներուն չարամտու-
թեամբը . որովհետեւ , նախ՝ Յուդայի զըզ-
ջումը երբէք ազդեցութիւն չ'ընել իրենց
վրայ . ան կու գայ , յուսահատութեան դրոշմը
կրող զէմքով մը կը յայտարարէ իրենց թէ՛
Մեղանչեցի անմեղ արիւնը մատնելով . ասկէ
աւելի անկասկածելի վկայութիւն չէ եղած
երբէք . Յիսուսի թշնամին է որ կը վկայէ ի
նպաստ անոր անմեղութեան , մատնիչ մին է
որ իր մատնութեան պտուղը դեռ չվայելած
կու գայ ետ կը դարձնէ մահադին վարձքը .
տարաբախտ մըն է , որ այլ եւս իր Տիրոջմէն
բան մը չ'ակնկալեր . և զայն տեսնելով կո-
րակոր , նախատակո՛ծ , դատաւարտուելու
մօտ , չի յուսար , մտքէն իսկ չանցներ եր-
բէք թէ ան կրնայ օր մը աս դարձը գիտ-
նալ . լոկ ճշմարտութեան ուժը կը բռնա-
դատէ զինքը իր ոճիրը խոստովանելու . իր
այս յետս-կոչումէն աւելի նպաստաւոր ի՞նչ
կրնայ ըլլալ : Սակայն այս անօրէն դասեր
ւորները որ անոր տկարութիւնը չահա՛ , ատ
էին , աչք կը գոցեն անոր ապաշ . գիտես .
քու գործդ է , կ'ըսեն անոր . լսել , Ար-
իւնց գործն է անմեղը դատաւարած ոճիրով
զարին արիւնը թափել , և ի՞նչ Աստուած
իրենց մեղաց չափը լեցնո՛ւրտերը կը խոստ-
որքան անաւոր ես , և
ցընես :

Այս Հրէից գլխաւորները, եղբայրներ, մինչեւ այն ատեն զէմ ելած էին Յիսուսի հրաշքներուն և Վարդապետութիւններուն. անդամալուծին բժշկութիւնը, մեղաւոր կնոջ դարձը, ի ծնէ կուրին տեսութիւնը, Ղազարու յարութիւնը իրենց համար անօգուտ դասեր եղած էին. այսօր Յուդայի յուսահատական մահն անգամ իրենց վրայ ազդեցութիւն չ'ըներ, զիրենք չի սարսափեցներ:

Շնորհքը անընդհատ չարաչար դործածեն է որ մարդս խստասրտութեան կը տանի: Դուք այնպիսի կէտի մը պիտի հասնիք, դո՛ւք, ո՛վ երկար ատենէ ի վեր Աստուծոյ ընդդիմացողներ, այնպիսի կէտի մը պիտի հասնիք, որ ձեզի պիտի չ'ազդեն այլևս ո՛չ ամենասոսկալի մահերը, ո՛չ ամենէն ահաւոր ճշմարտութիւնները, ո՛չ ամենատուր հանդէսները, ո՛չ ամենէն սրտառուչ դարձերը. և թերեւս արդէն իսկ հասեր էք այս կէտին: Ձեր խիղճին խայթերը խզղելով խղդղելով, ձեր միտքի լոյսին ընդդիմանալով ընդդիմանալով, և անդադար անսաստելով ճշմարտութեան, որուն սերմերը առատօրէն ցանուած էին ձեր սրտին մէջ շնորհիւ ընտիր զատարարակութեան մը և լաւ բնաւորութեան մը, հանգստօրէն կ'ապրիք ձեր ոճիրներուն մէջ, այլ ևս բան մը չի հաներ զձեզ ձեր թմբկութենէն, ո՛չ մեր քարոզած ճշմարտութիւնները, ո՛չ մեր կատարած խորհուրդները. անառակութիւնը, որ ատենով ձեր մէջ լոկ հասակի և խառնուածքի բորբոքում մըն էր, դարձեւ է սոսկալի փիլիսոփայութեան մը. թէ՛ ոճիրը թէ՛ առաքինութիւնը գրեթէ հաւասարապէս նուազ կ'ազդեն ձեր վրայ. գրեթէ հաւասարապէս պաղ և փիլիսոփայ էք թէ՛ կիրքերու հաճոյքներու մասին և թէ՛ շնորհքի հրապոյրներուն նկատմամբ. կ'ընծայէք Աստուծոյ և աշխարհի տաղտուկ մը, անդգայութիւն մը, ուր զձեզ հասցուցեր են պարտաւեալ կիրքերը, որոնք փրկութեան նկատմամբ բիւր անգամ աւելի երկրիւղալի են քան անառակութեան բուռն յոյզերը: Ո՛րքան հեռու էք Աստուծոյ արքայութենէն, և ո՛րքան երջանիկ կ'ըլլայիք եթէ գոնէ հասկնալ կարենայիք այս բանը:

Երկրորդ՝ Քահանայապետը զարմացմամբ տեսնելով թէ Յիսուս լուռ կը կենայ՝ իրեն դէմ եղած բոլոր ամբաստանութիւններու մասին, և կարծես անոր համբերութեան, հեղութեան և դէմքին մեծվայելչութեան մէջ գերմարդկային բան մը նշմարելով: Կ'երդուրնցնեմ զեզ՝ ըսաւ անոր, յանուն Աստուծոյ կենդանւոյ որ ըսես մեզի քե՛ղո՛ւն ես Աստուծոյ Որդին՝ Քրիստոսը: Բայց եթէ անկեղծօրէն ճշմարտութիւնը ճանչնալու բաղձանք կայ ինչու իր պաշտօնին սրբութեան մասին իրեն հարցում կ'ուղղուի: Հարցուցէ՛ք Յովհաննէս Մկրտիչին, զոր իբրեւ մարգարէ նկատեցիք, և որ խոստովանեցաւ թէ ան է Քրիստոսը. հարցուցէ՛ք իր գործերուն, զորոնք իրմէ առաջ մէկը չէ ըրած, և որոնք կը վկայեն թէ ինք Հօրմէն զըրկուած է. հարցուցէ՛ք իր կեանքին ականատես, ականջալուր վկաներուն և պիտի տեսնէք թէ հարեալութիւնը կրնա՞յ երբէք ընկերանալ այնքան անմեղ և սուրբ հանգամանքներու: Հարցուցէ՛ք սուրբ Գիրքին, դուք որ կը կրէք գիտութեան բանալին, և տեսէ՛ք թէ Մովսէս եւ մարգարէները իր մասին վկայութիւն տուած չեն. հարցուցէ՛ք կոյրերուն որոնց աչքը բացեր է, մեռեալներուն որոնց յարութիւն տուեր է, բորոտներուն զորս բժշկեր է, ժողովրդեան որ կոշտացուցեր է, Իսրայելի ոչխարներուն որ դարձուցեր է. եւ ամէնքն ալ ձեզի պիտի ըսեն թէ Աստուած երբէք մարդոց տուած չէ այդպիսի իշխանութիւն մը. հարցուցէ՛ք երկինքի որ այնչափ անգամ բացուած է իր գլխուն վերեւ որպէս զի ձեզի հասկցնէ թէ ինքն է սիրելի Որդին. եւ եթէ այս վկայութիւնները չեն բաւեր, հարցուցէ՛ք դժոխքին անգամ, եւ պիտի հասկնաք սատանաներէն, որ մարմիններէն ելլելով իրեն կը հնազանդին, թէ ինք է Աստուծոյ Սուրբը: Բայց հոս լրջօրէն ճշմարտութիւնը չեն փնտռեր: Դոս անմեղութեան ծուղակ կը լարեն. եւ, ինչպէս ստէսլ կը պատահի, մանաւանդ իրենց կիրքովը նախապաշարեալ մեծերու, կը հարցաքննեն, բայց իրենց սխալը հասկնալ չեն ուզեր. տեղեակի ըլլալու փափաքով կը ձե-

ւանան, բայց չեն ուղեր որ մէկը զիրենք տեղեակ ընէ:

Սակայն Փրկիչը, որպէս զի մեզի հասկըցնէ թէ մարդոց կիրքերն ու նախապաշարումները զմեզ արգիլելու չեն ճշմարտութիւնը փառաւորելէ (մանաւանդ երբ մեր հանգամանքը կը պարտաւորէ զմեզ զայն յայտնելու): Թէ զայն կը պարտինք անոնց անգամ որ զայն մեզի դէմ գործածել կ'ուզեն. եւ թէ միշտ սպասելու չենք որ ան լաւ ընդունելութիւն գտնէ՝ կը խոստովանի թէ ինքն է մարգարէներուն բերնով խոստացուած Քրիստոսը, եւ կը ծանուցանէ իր դատաւորներուն թէ պիտի տեսնեն մարդու Որդւոյն՝ Աստուծոյ աջ կողմը նստիլը եւ երկինքի ամպերուն վրայ հանգչած՝ մեծվայելչութեամբ դալը: Ասով իրենց ըսել կ'ուզէր. դուք չէք ուղեր ճանչնալ զիս կորակոր վիճակիս մէջ, պիտի ճանչնաք զիս օր մը երբ երեւնամ փառաւոր ամպերու վրայ, զօրութեամբ անով ու մեծվայելչութեամբ չըջապատեալ. հոս կ'երեւիմ ես իբրեւ եղեռնագործ մը, այն ատեն պիտի ըլլամ ձեր եւ համախումբ ազգերու դատաւորը: Թէեւ չըթայակապ է եւ նախատակոծ, բայց կը խօսի իբրեւ Աստուծո՝ սակայն մեզի ալ կը սորվեցնէ թէ, ապագային՝ ամէն բան կերպարանափոխ պիտի ըլլայ. աղքատն ու վշտահարը լուսաշող եւ փառաւոր աթոռներու վրայ պիտի բազմին. արդարեւոր որ կ'ոտնակոխուին եւ որոնց տկարամտութիւնը եւ կարծեալ միջակութիւնը այնքան կ'արհամարուին, պիտի փայլին այն ատեն օդին մէջ, ջինջ աստղերու պէս, եւ Յիսուսի հետ տիեզերքը պիտի դառնան. մինչդեռ մեծերն ու հզօրները, անոնք որ երկիրը կը դառնան, որ աշխարհիս վրայ կը թուին տէր ժողովրդոց եւ պետութեանց բախտին ու ճակատագրին, այն դիւցազները որ աշխարհէ այնքան գովուած էին, որ լոկ մարդկային փառքով մը փայլած էին, պիտի նսեմանան, կորագլուխ, ամօթապարտ պիտի խայտառակուին եւ պիտի նկատուին իբրեւ նախատինք մարդկութեան եւ համակուած պիտի երեւնան՝ միայն իրենց հրապարտութեամբն ու ոճիրներովը:

Սակայն այսքան սոսկալի ու դատաւորներուն կատաղութիւնը իջեցնելու այսքան յարմար վկայութիւն մը, Փրկիչին համար մահաբաւէր պատասխան մը կ'ըլլայ: Այդ անարժան Քահանայապետը կը պատուէ իր քահանայական հանդերձը եւ կը մարգարէանայ, անգիտակցարար, այդ արարքով, կ'ըսէ Ս. Լեւոն, թէ ինք ընդ միշտ կը մերկանայ իր քահանայական կարգէն, զոր Յիսուս, նոր Քահանայապետ, պիտի ժառանգէ իր Հօրը աջակողմը, ճշմարիտ սրբարանին մէջ, ուր միշտ կենդանի պիտի ըլլայ՝ մեզի միջնորդութիւն ընելու համար: Հայհոյեց, կ'աղաղակէ նա, այլ եւս վկաներու պէտք չունինք: Այդ զեղծ դատաւորը դատախազ կ'ըլլայ. հոս արդարութեան բոլոր կանոնները կը բռնաբարուին. քուէներու չի սպասեր, զանոնք կը թելադրէ: Եւ ոչ մէկ մը, այդ ժողովին մէջ, որ ատենք աշխարհիս ամենէն պատկառելին էր, կը համարձակի պաշտպան հանդիսանալ անմեղութեան. ամէնքը վատթարաբար կը համակերպին մեծին կիրքին, Քամաղիէլ մը անգամ չի գտնուիր, որ զգօն խորհուրդներով ջանայ ի կախ պահելու այս անիրաւ վճիռը (որքան քիչ կը պատահի որ մէկ մը առանձին իրաւունքի եւ արդարութեան կողմը բռնէ): Եւ առանց նախընթաց խորհրդակցութեան մը, այդ անիրաւ ժողովին մէջէն կը բարձրանան ձայներ, որ կը ծանուցանեն թէ Յիսուս արժանի է մահուան. Մահապալաքս է (Մտթ. ԻԶ. 66):

Փրկիչ իմ, այդ սրբապիղծ վճիռին մէջ, կ'երկրպագես այն դատակնիքին զոր Հայրդ կ'արձակէ այն ատեն քեզի դէմ. իր յաւիտենական բերնէն կը լսես քու դատապարտութեանդ անդառնալի խօսքերը. Արժանի է մահու. Մահապալաքս է: Կայիափա իր նենգաժէտ ձայնով երկնային պատգամին արտաբերողն է միայն. ուստի չես գանգատիր անոր անիրաւութեան դէմ. մորթուելու մօտ դառնուկի մը պէս կը լռես, եւ անոր անիրաւ վճիռին մէջ կը յարգես Հօրդ արդար եւ երկրպագելի հրամանները:

Սորվի՛նք ուրեմն, եղբայրներ՝, չսրգողիլ մարդոց դէմ, երբ մեզի անիրաւութիւն ը-

նեն . նկատե՞նք մեր թշնամիները Աստուծոյ զիտաւորութեանց , եւ մեր յաւիտենական նախասահմանութեան կարգին մէջ . որոնք , տեսնենք անոնց կիրքերուն մեզի դէմ արձակած նիւթերուն մէջ զանոնք ուղղող Տիրոջ իմաստութիւնն ու անտեսանելի աջը . եւ յիշենք թէ երբ մարդիկ զմեզ հաւաքեն աւելի յարգուելու են մեզմէ . որովհետեւ ան ատեն մեզի նկատմամբ Աստուծոյ արդարութեան պաշտօնեայ կ'ըլլան եւ այս աշխարհի մէջ՝ մեր վրայ անոր հրամանները կը գործադրեն :

(Շարունակելի)

ԹՈՒՂԹ ՀՈՎՈՒԱԿԱՆ

(Շար.)

Ինթիխապընդ հեվայի Եֆսաանի (կիրք) ստիգասըլա օլմասըն , չիւնքի ճէմալ վէ լէթաֆէթի էնտամ չապուզ սօլար վէ ծնուն եւրինէ ատէմի մէմնունիյէթ գայիմ օլուր : Քիթապը չէրիֆ պէօյլէ էօյրէտիր . «Գարընըն կիւղէլլիյինէ պագըպ արզու իթմէ» (Սիր . 26) : Շուարատան պիրի տէ «Կիւղէլլիք վէ թէվաղլունիւն պիր քիմնէ իւղէրինտէ իճթիմար նաաիր պուլընըր» սէմիշ տիր :

Ինթիխապընդ իգալաբէրէսըլիֆէ (փարապիրութիւն) օլմասըն : Պիր գարընըն սէրվէթի իչիւն ծնունլա թէզէվվիւն էյլէյէն քիմնէ , սուրը խորհուրդ վասըթասըլա քէնտիսինէ պիր էօմիւր արգատաշը ալմադտան զիյատէ պիր զէվճէ ալըր , տէր Ս . Յովհան Ոսկերեբան : Թէքրար Քիթապը մուգատտէս «էյէր գարը քէնտի գօճասընա ամիր օլուրսա , հիտտէթ , բէզալէթ վէ մահճուպիյէթ տէ պէօյիւք օլուր» պուլուրուր : (Սիր . Իէ . 28) :

էօյլէ իսէ սահիպի Ֆագիլիք օլանը ինթիխապ էթմէլիսինիզ . չիւնքի Ֆագիլէթ , սէրվէթտէն վէ կիւղէլլիքտէն չօզ իւսթիւն տիւր , վէ ալիլէլէր արասընտա սաատէթ հուսուլա կէթիլիր :

Այնի մեզհէպսէն օլանը ինթիխապ էթ-

մէլի . չիւնքի սօնունա գատար պիր արատա հաշանըլաճապ տըր : էյէր գարը գօճանըն ալիլէ խուսուսաթընա տայիր իչլէրտէ միւթթէֆիզ օլմասը , ծնւարըն սաատէթինի մուծիպ օլուրսա , վէզալիֆի վիճտանիյէ վէ խուսուսաթը մէզհէպիյէտէ միւթթէֆիզ պուլուրմալարը , նիհայէթսիզ սուրէթտէ քէնտիլէրի մէսուտ վէ պալիթիյար իտէր : Գաթօլիք ալիլէլէրին նէճապէթի մէզհէպլէ տիր . ծնւարը թէսէլլի իտէն մէզհէպ տիր , հէր եէրէ լահաթլըզ պալիշ էյլէյէն , ալիլէյի քէնտի էվլատլարըլա մէսուտ գըլան , մէզհէպ տիր : Պինաէն ալէյի , թէզէվվիւն ալէմինտէ մէզհէպլէրին իթիլաֆը , պէօյիւք մուհասէնաթա մանի վէ վիճտան իզթիրապլարընա սէպէպ օլուր : Իքի էֆէնտիյէ խաաիր օլան խըտմէթքեարըլար շաշըրըլարսա , ես միւթթէլիֆ մէզհէպլէր սահիպի օլան էպէվէյինի էվլատլարը նէճ օլուրլար : Աճէպա պու կիպի ալիլէլէրին , հիշ օլմազսա , պու տիւնհատա մէսուտ օլապիլմէլէրի գապիլ մի տիր : Պունտան մատա , աճէպա Գաթօլիք օլան թաւաֆ , Ալլահըն տիվանընտա օզէվալը էվլատլար իչիւն նէճ էվապ վէրէճէք տիրլէր : էվվէթ , Քիլիսայը չէրիֆ սօնունա գատար քէնտի էվլատլարը հագընտա չէֆիզ պիր վալիտէ օլուրը իչիւն Գաթօլիք թարաֆըն վէ ծնւարտան տօղաճապ օլան էվլատլարըն խայընը են միւթթէնա վասըթալարլա վէ մուհիմշարթլարլա թէէմին իտէրէք միլիսիլիք (խառն) պսակարա պիլէ միւսաատէ իթմէյէ վէ բուխսաթ վէրմէյէ մէճպուր օլուրյօր : Մամաֆիյի պու միւսաատէ վէ բուխսաթ՝ պիլա իթիլար տըր . չիւնքի Քիլիսա տաիմա չիւպհէ իտէր վէ գօրգար քի ճան սէլամէթինէ պիր զարար կէլմէսին : Պու սէպէպտէն նաշի , ալընան օ միւսաատէ , պու սուրէթլէ թէէհիւլ իտէնլէրին , հիշ տէյիլսէ , պու տիւնհատա մէսուտ օլապիլմէլէրինի թէմինէ քեաֆի տէյէլ պիր :

Սիցնի միւսաիք օլանը ինթիխապ իթմէլի , չիւնքի զէվճէն արասընտաքի պէօյիւք սիւն ֆարզը , մա էթթէսիւֆ , էֆքեար վէ էզվազ իւղէրին : տէ իճրայի թէսիր իտէր :

Այնի բապիաքա մալիֆ օլանը ինթիխապ

էթմէլի . չիւնքի պէօյլէ օլմազսա , հայաթ հէր իքիսի իչիւն տախի պիր ճէհէննէմտէն իպարէթ գալըր :

Այնի վազիյէքսէ օլանը ինթիխապ էթմէլի , չիւնքի հալ ու վազիյէթին ֆարզը օլմասը , թէրպիյէնին ֆարզը օլմասընը ինթած իտէր . թէրպիյէ վէ հիսսիյաթտաքի ֆարզըն նէթիճէսի տէ , հայաթըն պէտպախթ վէ թէհամմիւլֆէրսա օլմասընա գարու աշար :

Այնի իգքիսաւ սահիպի օլանը ինթիխապ էթմէլի . եօզսա , իւք կիւնլէրտէ հիսս օլունան զալէեանը մուհապէթ զայիլ օլտըգտան սօնրա , զէնկին թարաֆ պաշլար տահա զիյատէ իտտիաճը , միւթէքէպպիր վէ մազրուր օլմայա , վէ պշւնլարըն արգասընտան տա տախմի ինթիլաֆ վէ միւնաղէալար կէլիւլէր :

Իշթէ թէհէհիւլ իտիլէճէք օլան շախսըն ինթիխապընտա ըիալէթ օլունաճագ գաւաշիտը պասիթէթ պունլար տըր :

Գ . Ս . Պսակա հազըրըպ :

Պալատէ տէրճ օլունան գաւանիյը պասիթէթէ կէօթէ ինթիխապ մէսէլէսի նիհայէթ պուլտուգտան սօնրա , Տուա իլէ , էյի պիր խոռոսվանան իլէ վէ քիլիտէ օրէնքէրինէ իքաաթ իլէ Ս . Պսակ ինթուրդընա հազըրլանմագ իգթիզա իտէր :

Տուա . Պու կիպի պիր աղըր մէսէլէտէ ճէնապը Հազըն կէնի թէգէվլիւճ իտէնլէրին թէսապվուրաթը խայրիյէլէրինի , ամալը հաաէնլէրինի վէ թէշէպպիւրաթը մլւֆիտէլէրինի միւպարէքլէմէսի իչուն տուանըն նէ գատար լազըմ օլտուղունա շէքք ու չիւպհէ իսթէմէզ :

Խոռոսվանան : Էվվէթ , թէհէհիւլ իտէճէքլէր իչիւն հէման Ս . Պսակտան Էվվէլ էյի պիր խոռոսվանանք օլմալարը միւգթէզա տըր . չիւնքի պսակ տիրիլէր խորհուրդլաւընտան պիրի օլտուղը միւնասիպէթլէ , ծնը գապուլ իտէնին բուհը կիւնաճ իլէ , մէվթի բուհանի իլէ էօլմիւլ օլմայուպ , լութֆ իչինտէ տիրի օլմասը լազըմ կէլիւր : Մահադու կիւնաճ իչինտէ օլարագ վէ եախօտ նա լալը պիր խոռոսվանանք իլէ Ս . Պսակ խոր-

հուրդընա եազլաշանա հէզարան վայլար . զիրա պու կիպի տէհէթլի պիր սրբապղծութիւն իշլէյէն քիմսէ , նիքեանը տապիգասընտան իթիպարէն Ալլահըն ճէզալը սէզասընը իւզէրինէ տալէթ էյլէր : Աճէպա պունա ճիւրաթ իտէն քիմսէ , քէնտի մէսլէքինն վէզայիֆինի հիւննի իֆա վէ օ գատար մլւշքիլաթընա թէհամմիւլ իտէպլմէք իչիւն լազըմ օլան Ալլահըն լութֆընա նասըլ ինթիզար իտէպլիւր : Աճէպա զէմանըմը պէտպախթ իզտիվաճլարընն ասըլ վէ էսասի սէպէպի պու սրբապղծութիւնլար տըրլար տէնիլէմէզ մի :

Հալորդուքիւն : Զերմեռանդըզլա Հալորդութիւն ալմալը տըր : Քիլիտալը Շէրէֆ Պսակտան Էվվէլ Հալորդութիւն ալմալը հէր քէսէ թալսիյէ էյլէր , զիրա պու սուրէթլէ Յիսուս Քրիստոսը տախի սէնին տիւլիւնիւնէ տալէթ էթմիւլ օլուրսուն , վէ Յիսուս պիր վազըթ Գալիլեանըն Կանա շէհրինտէքի տիւլիւնէ կիտիպ , կէլին վէ կիւվէյիյի թէսէլլի էթտիյի կիպի , սանա տա կէլիւր , վէ կէրէք տիւլիւնիւնտէ կէրէքսէ պիւթիւն էօմրիւն իչինտէ , սէնին իլէ վէ ալիլէն իլէ պէրապէր գալըր : Աճէպա , Կանա տիւլիւնիւնտէ Յիսուս աղիզ վալիտէսինին բէճասըլա սուլը շարապա թէպտիլ իտէրէք , տիւլիւն սահիպլէրինի պէօյիւք էնտիլէտէն գուրթարմասըլա թէաճիւպէ շայան պիր տէ միւճիլաթ եաբմասը մը : Էյ թէհէհիւլ էտէն Գաթօլիքլէր , սիզին տէ տիւլիւնլէրինիպսէ Յիսուսըն հուղուրընա , Յիսուսըն մլւճիլաթշարընա , ծնուն ալլահանի գալըրըճըրդընա պէօյիւք ինթիխաճընըզ վար տըր : Էօյլէ իտէ սաատէթինիզ իչուն պէօյիւք էհէմիյէթի հաիզ օլան Պսակընըզ վազթընտա ծնը Ս . Հալորդութիւն վասիթասըլա գապուլ իտինիզ , քի օ քէնտի աղիզ վալիտէսիյլէ պէրապէր սիզին ալիլէնիզ իչէրիսինտէ գալսըն վէ ծնուն տախմիլ Էվվաթ սիզինլէ պէրապէր պուլունմասընը արգու իտէր իտէնիզ , հիւ պիր կիւնաճ իլէ , հիւ պիր եօլտուղըզլա ծնուն գալպինի գաթիլէն միւքէտտէր էթմէյինիզ :

(Մապաշի վար)

ՕՐՄԱՆԵԱՆԻ ՅԱՅՈՑ ԵՎԵԼԵՑԻ, ԳԻՐԻԸ (*)

Գ.

(Շար.)

Ինչո՞ւ համար կ'ընէ այս տգեղ խաղը . մղելու համար Հայ Եկեղեցին յեղափոխութեան մեծ շարժումին գործակցելու կրօնքի դէմ եւ յատկապէս Կաթողիկէ Եկեղեցւոյ դէմ: Առ այս կարեւոր կը տեսնէ նախ գոհ պահել զայն իր վիճակէն, մանաւանդ ինքն իրմով գինովցնել. հետեւաբար էջմրածնական Եկեղեցւոյ մէջ այս օրս ի՞նչ պակասութիւն ու զեղծում որ կայ իբր հնաւանդ գովելի սովորութիւն կը ջատագովէ. մինչեւ իսկ խոստովանանքի մէջ որոշեալ բանաձեւով ու խոնովին խոստովանելու գայթակղեցուցիչ անկարգութիւնը, խոստովանանքէ վերջ քանի մը օր Ս. Հաղորդութիւնը յետագծելու վտանգաւոր զեղծումը, Սուրբ Հաղորդութեան առջեւ կանթեղ չվառելու անպատկառ անզգուշութիւնը եւ տեղական շատ ուրիշ զեղծումներն, որ թերահաւատութեան կըրնան տանիլ ու կրօնքի թուլացման, նոյնպէս նորազանդներէ մտած ծանրագոյն շեղումներ իր աւանդութենէն, զոր օր. ամուսնալուծութիւն, կուսակրօնութեան վրայ նուաաս գաղափար ելն. կը նշանակուին իբր հին ու հառարակ կանոն Հայ Եկեղեցւոյ: Այսպէս ուրիմն զեղծումներն կը նուիրագործէ, որ պէտքի անոնց մէջ հաստատէ ու պնդէ զէջմրածնականը եւ մնայ այսու Կաթողիկէութենէ հեռացած վիճակի մէջ: Ահա Օրմանեանի մերձաւոր դիտումը. ջանալ որ էջմրածնական Եկեղեցին քնացնէ իր անկումին ու քանդումին մէջ, օրօրել անոր կրօնական ողբալի խեղճութիւնը, արդարացնելով անոր հաւատքի ուսման պակասն, հետեւաբար ամէն կրօնամարտ հովի առջեւ առձգումն ու տեղատուութիւնը, կանոն առնելեաց ներկայացնելով ամէն անկարգութիւն: Բաւական է որ էջմրածնական Եկեղեցին չմօտե-

(*) Տես Թիւ 79 էջ 57.

նայ Հռովմէական Եկեղեցւոյ՝ ո՛ր մի ազանդի ձեւ կ'ուզէ պոնու. ահա Օրմանեանի ամենէն աւելի մօտէն դիտած նպատակը:

Բայց չկանխենք եզրակացութեան յանգիլ, կը կրկնենք իրեն հետ. բաւական է թեթեւ գիտութիւն մը եկեղեցական պատմութեան մէջ՝ տեսնելու համար Օրմանեանի այս ճիշդ իր գրքին մէջ: Այդ բանը պիտի բնենք, կ'ըսէ ինքը, այնպիսի կերպով որ այն եզրակացութիւնը, որուն կ'ուզենք աւաջնորդել բնօրէնը՝ բնական եւ դիւրին կերպով յայտնուի. տրամաբանութեան ոգով հետեւի եւ բնօրէնը լիսին մեզ տեղ բնէ. երբ ձրի հաստատութիւններն ու կանխամտածուած նախադասութիւններ կը շարակցին առանց կարեւորութիւն տալու թէ գիացողներն ի՞նչ պիտի ըսեն, շատ դիւրին է սխալին ալ տրամաբանական ձեւ տալ. ուստի եւ սխալի մէջ ալ միտք յոգնեցնելու է՝ զայն ճշմարիտ եւ ուղիղ ներկայացնելու համար: Այսպէս ըրած է Օրմանեան եւ այս պատճառաւ անոր գիրքը հերքելու եւ ջրելու դէւրագոյն եղանակն պիտի ըլլար՝ առնուլ այդ գրքի բաժանումն, պահել գլխոց նոյնութիւնը եւ նորէն շարադրել, տալով անոր պէտք եղած արբանքութիւնը: Պիտի մտղթէի որ Կաթողիկէայ քահանայից դասուն մէջէն (ուր չեն պակսիր կարող եւ հմուտ գրիչներ) ելլէին իրենց ազգի պատուոյն եւ Եկեղեցւոյ հնաւանդ ուղղութեան նախանձախնդիրներ եւ ՕՐՄԱՆԵԱՆԻ ՆՈՐԱՂԱՆԴ ՀԱՅ ԵՎԵԼԵՑԻՈՅՆ հակադրէին Հայոց հնաւանդ Եկեղեցւոյ հարազատ պատմութիւնը. ո՛րքան արդիւնաւոր գործ պիտի ըլլար:

Ասոր խրախոյս կրնայ ըլլալ նոյն իսկ հանապազօրեայ վարադատումն մոլորութեան եւ անոր արբանեակներու յարուցած փոթորիկն. «Հերետիկոսութիւններն փուլեր են, կ'ըսէ Ս. Օգոստինոս, որոնցմով Կաթողիկէ Եկեղեցւոյ զաւակներն կը ցնցուին իրենց բրմութենէն՝ յառաջանալու համար սուրբ Գրոց գիտութեան մէջ» (Մեկն. Սլւս. 7. Թ. 15), եւ անկէ առաջ ըսած էր Պօղոս Առաքեալ «Բայց եւ հերձուածք լինելոց են ի ձեզ, զի որ ընտիրքն ի ձեզ՝ երեւեսցին» (Գլ.

ԺԱ. 19. Ա. Կոր.) : Ինչո՞ւ համար Կաթողիկէ Եկեղեցւոյ մէջ հաւատքի ուսմունքը աշխարհայեցողութեան, աշխարհայեցողութեան մշակուած է եւ յաղթական կերպով պաշտպանուած է . որովհետեւ ամենէն աւելի հալածուած է . նա շարունակ նշաւակ ամէն մոլորութեան՝ ամենուն դէմ ալ կը ճակատի եւ ամենուն դէմ յաղթական կերպով կուրծք կու տայ գործածելով ամենուն պատշաճ զէնքերն : Ո՞վ սքանչելի տոկունութիւն , աստուածային ամբողջութիւն Կաթողիկէ Եկեղեցւոյ . որքան աշխատու եւ շօշափելի կ'ընէ հիմնադրին անսուտ մարգարէութիւնը «Եւ դրունք դժոխոց զնա մի՛ յաղթահարեցեն» : Բաւական է վերջին տարիներու վրայ աչք մը նետել . սկսաւ երեւան գալ՝ շատ չընէր՝ Արդիապաշտից արմատական դրութիւնը , որ ետեւէ էր գլխաւորաբար ամէն աղանդ ու դաւանութիւն իրարու հաշտեցնելու հիմնակէտեր մը կառուցանել՝ կրօնքի օժանդակ ամէն գիտութեանց մէջ , որ հետեւաբար ճիւղաւորուեցաւ փոխադրուածութեան , պատմութեան , Ս. Գրոց մեկնութեան ու տեսական Աստուածաբանութեան մէջ եւ ուղեց ձեռք նետել Եկեղեցւոյ իրաւագիտական ու կազմակերպական յօրինուածքին վրայ : Եկեղեցւոյ Գերագոյն Գլուխը դատապարտեց այդ աղանդը՝ վերլուծելով ու մերկացնելով անոր ամբողջ խայտառակութիւնը , որ գիտութեան , արդի զարգացումի , բարձրագոյն քրիստոնէական եւ ժամանակի պահանջքի անուամբ սքողուած էր : Ինչ եղաւ . Կաթողիկէ աշխարհի մէջ մրցում մըն է որ սկսաւ այդ աղանդի դէմ եւ սքանչելի ուսումնասիրութիւններ , քաջիմաստ հրատարակութիւններ սկսան լոյս տեսնել : Կաթողիկէ Վարդապետութիւնը նոր փայլ առաւ եւ անգամ մըն ալ ցուցունեցաւ թէ Կաթողիկէ հաւատքը շատ հիմնեալ է ու անմիջական եւ Պետրոս իր յաջորդին բերնով հաստատեց իր եղբայրներն ու ճշմարիտ հաւատացեալներն՝ այս նոր դաւաճանութեան դէմ :

«Աստուծոյ նախախնամութիւնը թոյլ կու տայ որ հերետիկոսներ ու բազմադիմի մոլորեալներ զգնուին , որպէսզի անոնց զմեզ

երգիծանելու ժամանակ եւ մեզմէ մեր չզիսցածն հարցնելով՝ սքափինք մեր ծուլութենէն եւ ետեւէ ըլլանք... ստովելու : Շատերն խիստ ծոյլ են ուսմունք ընելու մեջ եթէ հերետիկոսաց սքիսմա մը ու հեղուքեամբ բունեցնեն չցնցուէին եւ սքիսմա չըլլային ամբողջալ իրենց սքիսմաքեան վրայ եւ վերահասու չըլլային իրենց անփորձութեան վրասնգրին վրայ . (Յղ. Մն. Մանիք. Ա. Թ. 2) : Ո՞րքան թարմ է Ս. Օգոստինոսի այս գործնական խրատի պէտքը մեզ համար ներկայ ժամանակաց շարութեան առջեւ : Իցի՛ւ թէ Օրմանեանի եւ անոր համախոհներու գործնական բարիքն առաջ բերէր մեզ համար ալ եւ մեր կղերն իւր անմիջելի հմտութեամբ ու ձեռնահասութեամբ ըմբերանէր սուտն ու սըխալն , հոչակէր ճշմարտութիւնը , զոր գիտնալուն համար այսօր կ'արհամարհէ Հայը : Համոզուելու է որ Կաթողիկէ հաւատքը հաւածիչ չէր ունենար եթէ կիրք եւ սքիսմա չըլլային . եւ յաճախ կիրքն մեր մէջ սքիսմաքեան արդիւնք է եւ ստիպուած ենք շատ անգամ արձակելու արտերնուս խորհրէն տէրունական հառաչք . «Հայր քո՞ղ դոցա զի՛ ոչ զիսեն զինչ գործեն» : Տգիտութեան դէմ ուրեմն պատերազմելու է հակառակ անոնց որ կը շահագործեն զայն՝ հաստատելով իրենց մոլորութեան մէջ պարզամիտներն : Վստահ ենք որ եթէ ճշմարտութիւնը համարձակօրէն , յարատեւութեամբ եւ ժողովրդեան մատչելի պայմաններով մատակարարուի , Հայը պիտի իւրացնէ զայն եւ անգամ մը որ իւրացնէ գիտենք թէ ինչպէս կրնայ զայն պահել :

Արդէն ճշմարտութիւնը ինքնին՝ անպատճառ յաղթական է , վստահի «Անոր զօրութիւնը այնքան մեծ է որ կը փայլի... նոյն իսկ անոնց միջոցաւ որ իրեն կը հակառակին» (Ս. Հիլարիոս) : Ասոր պատճառը կու տայ Ս. Օգոստինոս . «ձեւաւորութիւնը, կ'ըսէ , հարկ է որ յաղթահարէ քեզ զինքն ուրացողը եւ քեզ խոստովանողը» : Երկուքին ալ լոյս է՝ միոյն ի ցաւ աչաց , միւսին ի տես եւ ի զուարթութիւն : Յաւալի է սակայն երբ ուրացող մը յաղթահարուի ճշ-

մարտութենէ՝ որովհետեւ կամաւոր կուրու-
թենէ աւելի չար աղէտ չկայ, մինչդեռ ու-
զելով եւ յօժարութեամբ յաղթահարուիլ
ճշմարտութենէ՝ մարդկային մաքրի եւ բա-
նականութեան ամենաքնական քայլն է:

Խ Ա. 2

ԵՕԹՆԵԱՎ ՔՐԻՍՏՈՆԵԻ

ՏՕՆԱՑՈՅՑ

Մարտ 9	† Կիր. թմ. 2. Բառասն. Գալստեան
10	Բշ. թկ. չգ. or Մեծ Պահոց
11	Դշ. գմ. չե. »
12	Դշ. գկ. չը. »
13	Եշ. Կմ. չր. »
14	Ուրբ. Կկ. չս. »
15	Շր. ամ. յաւ. » Յարութիւն Դա- գարու

Երբ ըստ մեր Տօնացոյցի յունենանք Սուրբեր՝ so-
նեքու, Կարողիկե եկեղեցւոյ մեծամեծ Սուրբերէն միոյն
վարժը փոքր ինչ ընդարձակօրէն պիտի դնենք, որոնք
քիչու մեր Տօնացոյցին անցած չլըլան, սակայն արդէն
սուր մեզ ալ ծանօթ ըլլալով եւ խեղճ արտաբեր իւր
սրբութեան պատճառաւ համարելու օրինակելի պիտի
լըլան մեր ընթերցողներուն. որոնց շատերը՝ այդ սուր-
բերու անուններէն ալ կրկնով հանդերձ, անոնց հիւս-
նադի վարժը կ'անդիստանան:

Ս. ԹՈՎԱՄԱՍ ԱԳՈՒԻՆԱՅԻ, Հրեշտակային Վար-
դապետ մականուանեալ. Տօնը յ7 Մարտի:

Այս մեծ վարդապետին հօրը անուանէր Լան-
տոլիոս, Ագուլիոյի կոմսերուն հաշակաւոր զարմէն-
իտալիոյ մէջ. իսկ մայրն՝ Թեոտորա, գուտար Բրէ-
թիի կոմսին, կը սերէր որմանտացիներէն, որոնք տի-
րած էին Սիկիլիոյ եւ Նաբոլիի:

Մեր Սուրբը կաթին հետ մեկտեղ ծծած էր Սըրոյ
Կուսին չերմեւանդութիւնը, զոր պահեց իր ամբողջ
կեանքին մէջ: Իր տղայութեան ժամանակ զինքը
հանգարտեցնելու ամենայնոց միջոցն էր իրեն գիրք
մը տալ, զոր սիրով կը թղթատէր: Հինգ տարեկան
Մանթէ Գաստինոյի վանքը դրին զինքը, որպէս զի
այնպիսի լաւ վարժարանի մը մէջ հրահանգուի Աս-
տուծոյ սիրոյն ու երկեւզին մէջ: Երբ տարւ
տարե-
կան եղաւ, անկից հանուելով՝ զրկուեցաւ Նաբոլի
իր ուսմանց ընթացքը շարունակելու համար: Բայց
հոն երթալէ առաջ, Ապուլացոյի մէջ իր հօր մէկ դեղ-
եակը մնաց ժամանակ մը, որ միջոցին ալ տեղերը
սկսաւ տիրել սատակի սղութիւն մը: Այդ տղան որ

գլխով իւր համար ծնած էր, գաղտնի կերպով հաց կը
բաժնէր աղքատներու: Հայրը լսելով, ուզեց անձամբ
բռնել զինքը այս բարեպաշտ գոգոթեան մէջ. և
վրայ հասնելով ուզեց զիստալ թէ ի՞նչ կը տանէր
Թովմաս իր վերարկուն ներքեւ. երբ մանկիկը բացաւ
դաշն, հայրը տեսաւ հոն թարմ թարմ և անուշա-
հոտ վարդեր, թէեւ եղանակը ձմեռ էր. անմիջապէս
թղլ տուաւ իր զաւակին որ աւելի ազատօրէն կատա-
րէ իր սրբութեան իշխանները:

Նաբոլիի մէջ քաջ վարժապետներ ունեցաւ, և
իր քաջ եւ ուշիմ, թափանցիկ և խորասրտեղ հուր-
մաքովը յառաջագիւնեց և գերազանց գանուեցաւ քան
ամէն իր աշակերտակիցները, և սկսաւ արդէն իր տալա-
գայ համբաւոյն յայտնի նշանները տալ: Հոն ծանօթա-
ցաւ Ս. Գոմինիկոսի կարգին կրօնաւորաց հետ, որոնք
ամէնուն վկայութեամբ սրբական կեանք մը կը վա-
րէին. և տաճարաւոր տարեկան էր երբ անոնց սքեմ
հագաւ. ոմանք կ'ըսէին թէ տաճարէն տարեկան էր:

Իր ծնողքը իր ալս ընթացքէն շուարեցան: Լսեց
Թովմաս որ իր մայրը Նաբոլի կու գար զինքը բըւ-
նութեամբ առնելու, հետը տանելու. և աղաչեց
վանքին մեծաւորին որ զինքը Հռոմ դրկէ: Իսկ մայրը
հոն ալ գնաց իր ետեւէն, և հասցեաւ որ իր աղան
գէպ ի Բարիզ ուղեւորած էր տրդէն: Չգանդաղեցաւ
սովորն այդ կիւնը. և որովհետեւ իր երկու առջինեկ-
ները, Լանտոլի ու Բէյնալդ, Թուքանա կը գտնուէին
Փրեդերիկոս կայսեր բանակին ծառայութեան մէջ,
գրեց անոնց որ ամէն միջոց գործածեն ձերբակալել
տալու համար իրենց եղբայրն Թովմասը, և զայն զըր-
կին իրեն՝ ընդ հսկողութեամբ: ձիւղ ալսպէս ալ ե-
ղաւ. զինք հալածող զօրակները կալանաւորելով
բերին յանձնեցին իր մօրը, որ ամէն ջանք ի գործ
դրու գտնի իր մօրէն դարձնելու, այլ անողւտ. իր
բոլոր գործակից աշխատանքներն ալ ի գերեւ ելան:
Երկու քոյրերուն երիցագոյնը՝ որ կ'ուզէր յաղթել
Թովմասին, ինք պարտուեցաւ. հրաժարեցաւ աշխար-
հէս, մերժեց փառաւոր ամուսնութիւն մը, և մայ-
րապետ: Գրեմն զգեցաւ՝ Կապուսի Սըրուհի Մա-
րիամ՝ Վանքին մէջ, որուն յետոյ Մայր-Մեծաւոր ե-
ղաւ. ու բոլոր կեանքին մէջ սրբութեան օրինակ
համարեցաւ:

Լանտոլի ու Բէյնալդ պատերազմէն վերագար-
ձին տեսնելով իրենց մօրը վիշաք, հայրերուն շփոյն ու-
թիւնը և Թովմասին իր մօրէն մէջ յամառութիւնը,
իրեւ վարժ պատերազմիկներ՝ որոնցին ինչպիսի բռնի
ուժով վերջացնելու Ուսու՝ զԹովմաս մերկացնելով իր
կրօնաւորի հագուստին, արգելափակեցին իրենց Բօքքա-
Սիքքա դղեակին մէջ, և իր սքեմը քիչի բղիկ ըրին,
աշխատելով յաղթել անոր հաստատաթուութեանը մէջ
միայն բանտի ձանձրոյթով. այլ և բոլորովին սատա-
նայական միջոցներով: Բերին անոր գեղադէմ և ա-
պերասուն կին մը, որ մեծ վարձքի փոխարէն յանձնա-
ռու եղաւ զայն մեղքի հրապարակել և գալթակեցնել:

Յարձակումը ուժգին եղաւ և Թովմաս զգաց ա-

վարըղընը պաշգասրնտան ալմամըշ օլան, տախմա վար օլմուշ օլան, վաճիպ իւլ վիւճուտ վէ էպէտի պիրիցից վարըղընը գապուլ վէ իթիրաֆ իթմէք շարթ տըր: Վէ պու վաճիպ իւլ վիւճուտ վէ էպէտի վարըղըն նամը ճէլլի Ալլահ տըր, էօյլէ իսէ վար տըր:

Հիքէալէ: Էքօլ Մօտէրն թապիր օլունան մէքթէպլէրն պիրինտէն ճէնուզ նէշէթ իթմիշ օլան պիր կէնճ, հազըր պուլունաղըր պիր մէճլիստէ, Ալլահըն վարըղըն ինքեարա գալգըշմըշտը: Էքքեանը մէճլիստէն պուլունան պիր մուգալէլաթ մուհաբըրի օնա շու սուրէթլէ խիթապ էլլէր: Էֆէնտի, քեպլինաթըն մէվճուտ օլտուղընը բէյ իւլ այն կէօրիւյօրուզ վէ պունը ինքեար գապիլ տէյիլ տիր: Աճէպա քեալինաթը քիմ խալգ իթմիշ տիր: Թապիի տիր քի, օնը ինան խալգ իթմիշ տիր տէնիլէմէզ: Քէնտի քէնտիսինի խալգ իթմիշ տէմէք տէ պիր ապէսի ֆահիշ տիր: չիւնքի, պիր էվ պիլէ, հէր նէ գատար քիւշիւք տախի օլտա, եալընը քէնտի պաշընա քէնտի քէնտիսինի ինշա էտէմէզ, հէր հալտէ մէվատտը լազըմէյի իհպար վէ հէր շէյի քէնտի մահպը մինասիպինէ վազ էլլէյէճէք պիր ֆալլին, պիր միմարըն վիւճուտընա լիւզուլմ վար տըր, տէյիլ մի:

— Աֆվ իտէրսինիզ, քեալինաթը թէշէլ իտէն մէվճուտաթ հէր եէկտիկէրլէրինէ վարըգ վէրմիշ տիրլէր, տէր կէնճ էֆէնտի:

— Մուգալէլաթ մուհաբըրի, բէք էյի, տէր օնա: Եէրտէն կէօյէ գատար տիրինէ ուզանմը վէ էն եօգարըքի հալգալարը պուլունաթլար իչինաէ զայիպ օլան ուզուն պիր գէնճիք ֆարզ իտինիզ: Նիմտի սիգէ սօրարմ քի պու գէնճիք նէյէ թազըլմըշ տըր, եալտ օնը թուլտան քիմ տիր: Զանն իտէրմիսինիզ քի, աշաղըտաքի պիրինճի հալգա իքինճիյի, իքինճի հալգա իւշիւնիճիւլ, իւշիւնճիւ տէ տէօրտիւնճիւյի, նիհայէթ պու սուրէթլէ պիր պիրինի թուլտարազ պուլունաթլարա գատար ուզանմըշ տըր եօլունտա պիր ճէվապ պու միւշէլի հալլ իտէպիլսին: Զանն իտէրմիսինիզ քի, պուլունաթլարա գատար վասըլ օլունտըգտա պիլէ, օ գէնճիլին ուճունըն հիշ պիր թարաֆա թաղըլմազսըղըն տուրմուշ օլտուղընը գապուլ իթմէք գապիլ օլաճագ տըր: Պու սիւալլարա մուլթազա խալլըր տէմէքլէ մուգապէլէյէ մէճպուրընը: չիւնքի էք պիր հալգա լազըմ տըր քի, պիր թարաֆտան թուլտուլմուշ օլարազ, քէնտի տէ տիկէր հալգալարը գալտըրապիլսին: Իշթէ ինանղարըն վէ սպիր պիլճիւլէ մախլուգաթըն թէսէլսիւլ գէնճիք տէ պէօյլէ տիր: հէր հալտէ, վարըղը քէնտիլիլինտէն օլան, էսասը մէվճուտիլէթինի պիգաթիհի հայիզ պուլընտն վէ քէնտիսի հիշ պիր թարաֆտան վար օլմըշ օլմազօրըն պաշգալարընա վարըգ վէրմէյէ գատիր վէ

քեաֆի պուլունան վանիպ էլ վիւճուտ իվ պիր վարըղա լիւզուլմ գաթի վար տըր:

— Ճագաթ, նիմայէթիզ սալթա հալգալար ֆարզ իտիլէճէք օլաբա, օ վազըթ արթըգ պիր իթլրազընըզ գալամազ, տէր տէլի գանլը:

— Աֆվ իտէրսինիզ, էֆէնտի, կէօրիւնիւյօր քի իմի հիսապտա գուվէթլի տէյիլսինիզ, չիւնքի նիմայէթիզ պիր սալթ ֆարզ իթմէք միւմիլինաթ տիր: Արա մէվճուտ օլան եէրտէ սալթ տա մէվճուտ տըր վէ պիրինճի իքինճի տէմէք գապիլ տիր: Հէր նէրէտէ քի պիր տտէտ վարա, պիր մէպտա, պիր պաշլանըճ, պիր նօգթալը հարաքէթ, վահիտի գընտի (unité) օլան պիր պիրինճի տէ վար տըր: Մէսէլա օն տտէտի, քէնտինտէն էվլէլ soqուզ վար օլտուղընա, soqուզ ատէտի, սէֆիզէ... իֆի սալթը տա պիր սալթը վար օլտուղընա տէլալէթ իտէր: Պինաէն ալէյ, մէվճուտաթտաքի, մախլուգաթտաքի սըրանըն, սիլսիլէնին (série) էլպէթտէ պիր պաշլանըճը վար տըր, էլպէթտէ էպէտի տէլի տիր:

(Մապաշի վար)

Տ Ե Ղ Ե Կ Ա Գ Ր Ա Կ Ա Ն

Հ Ո Ո Մ Ե Ի Կ Ա Յ Ո Ղ Ի Կ Է Ա Շ Խ Ա Ր Է

Ճենովայի Անտիկոսական փոխմորդ, Ճիագոմօ տէ Ամիլիա Գերապաճառը, Ս. Քահանայապետ տէն ունիկորուլիւն, ընդունելով, յայտարարեց Ն. Արուլթիան թէ պիտի ներկայացնէ պատուիրակութիւն մը կազմուած նոյն քաղքին Աթոռիկէներէն: Դորնք եկած են ըողոքելու Խալալական կառավարութեան դէմ՝ Ճենովայի Արքեպիսկոպոս անուանուած Գարոն Գերապաճառին պաշտօնավարութեան հըրաման չտալուն համար, և որոշած են միտ չդնել Խալալական կառավարութեան յաւակնոտ պահանջանքներուն: Արքեպիսկոպոսին քնակութեան համար պալատ մը պատրաստ է, և թեմին Վարչութեան կարեւոր գումարը պիտի ապահովուի հանրային հանգանակութեամբ մը:

Հետեւաբար, կը սպասուի որ Քահանայապետը յայտարարէ ի կտի մնալը պատահական արգելքին զոր դրած էր Ճենովայի վրայ եթէ ան հպատակէր Խալալական կառավարութեան պահանջներուն:

Պ. Պէռնար Փիքարտօ Սուրբ-Տաիմիկոսի Հասարակապետութեան արտաքոյ կարգի պատուիրակը՝ Ս. Աթուրի մօտ, Հոռմ եկաւ նոյն Հասարակապետութեան կառավարութեան և ժողովուրդին յարգանքն ու մեծարանքը Ս. Հօր մատուցանելու համար:

*. Լրագիրները կը ծանուցանեն թէ Լիթուանիոյ ազգայնական կուսակցութիւնը, Հռոմի մէջ եկեղեցական կաթողիկէ ներկայացուցիչ մը ունենալու գերով, Ռուս կառավարութիւնը Գեր. Փրոփպանիսը անուաներ է Հռոմի Լեհաց Ս. Ստանիսլաւոս եկեղեցւոյն ժողովրդապետ:

*. Մեծ հանդէսներով պիտի տօնախմբուի Բոսթոնի թոմարի թեմին հաստատութեան շորահարկաւեակը: Ֆառլէյ Կարդինալը և Միացեալ-Նահանգաց բարձրաստիճան եկեղեցականներէն շատերը պիտի մասնակցին այդ տօներուն որ պիտի տւեն չորս օր:

*. Աւստրիոյ հարաւային Սլաւները կը պատրաստեն այս տարւան համար կաթողիկէ Սլովէն և խրուարական համաժողով մը: Տարւոյն վերջեր տեղի պիտի ունենայ ազգային ռախտագնացութիւն մը գէպի Հռոմ, որուն պիտի մասնակցին Կաթողիկէ Ընկերութիւններ:

ՀԱՅ ԿԱԹՈՂԻԿԷ ՊԱՏՐԻԱՐԺԱՐԱՆ

Արհիպապօս Կաղէան, Վիճակաւոր Տրապիզոնի, մեկնեցաւ իր թեմը Մարտ Կին: Ողջերթի գացին նաւը՝ Արհի. Արփարեան և Ռոքոսեան Արքեպիսկոպոսները նոյնպէս Յիսուսեանց Գաւառական Մեծաւորը և ուրիշ Հայր մը:

*. Մարտ 6ին տեղի ունեցաւ Կաթողիկոսարանի մէջ Աւագ Թեմի Քահանայից Աստուածաբանական ժողովը և զբաղեցաւ ինչ ինչ բարոյական խնդրներով:

Ն Ե Ր Ք Ի Ն Գ Ո Ր Մ Ե Ր

Վերջերս Սապահէտօնի Իշխանին քարտուղար Լուծֆի պէյի կողմէ հաստատուած գաղտնի քովիթէ մը մէջտեղ հանուեցաւ: Այդ քովիթէն Օսմանեան ազգին եւ բանակին կոչ անուանով տետրակներ տրւալագործ էր և Էրզրում պիտի զրկէր, երբ բոլոր տետրակները ձեռք անցուեցան: Քովիթէն տետրակներուն մէջ կ'ըսէ:

Պիսի ցերեկն Իքթիսան, եթէ Էսիրէն եւ Կղզիներ փրկէր. բայց թեւամութեանց վերսկսումին հետեւանալով հաւանութեան համար աւելի անպատեարար պայմաններ պիտի պարտադրուին մեզի: Կրնայ ըլլալ որ Անաստուն եւ Սուրիան վանցի մէջ ըլլան: Բայց անկարելի է Էսիրէն ազատել: Ո՛ր եւ Իքթիսան խոստումներ: Ինչո՞ւ համար բանակը իր նոր հրամանատարին հրամանին տակ անգործ կը մնայ: Եթէ կ'ուզենք երկին միւս մասեր եւ Իսլամներու կեանքը փրկել, արքունակ: Չմոռնա՞նք ցերեկն թեւամութեանց, որոնք արտաքին թեւամութեան աւելի վանգաւոր են: Իսլամութեան գլուխ անցնենք կառավարութիւն մը որ կացութենէն հասկնայ: Ժամանակը կ'անցնի, եթէ մեր պարտականութեան մէջ թեւամանք մեր երակին մէջ արիւնին ցամաք ըլլալը ցոյց պիտի տան:

Այս դաւադրութեան մեղսակից կը նկատուին ի մէջ այլոց հետեւեալ չորս սպաները. գնդապետ Բա-

սըն, որ Սախ փաշայի Իթիհատական դահլիճին անկումէն անմիջապէս վերջը ազահատութեան տնօրէն անուանուեցաւ հրամանատար Սաֆֆէթ, Սպոյակոյ-տի հրամանատար Շէվքէթ և հազարապետ Քէմալ պէյերը, որոնք Խէլասքեարան քովիթէին անգամ էին: Այս չորս սպաները Անատոլիոյ մէջ զանազան պաշտօններու կոչուած էին: Բայց չէին մեկնած Պոլսէն ուր կը պահուէին:

Մ Ի Զ Ա Զ Գ Ա Յ Ի Ն

Մեքսիկոյի ներքին բռնու և աղետալի պատերազմին միջոցին նախորդ նախագահ Մատէրօ և նախորդ փոխ-նախագահ Սուարէզ բանտ տարուելու ատեն իրենց բարեկամները փորձ մը ըրած էին զերենք ազատելու, որու վրայ կռիւ մը սկսելով Մատէրօ և Սուարէզ սպանուած էին: Ֆէլիքս Տիագ Գորալարը ինքզինքը բողբոջին անպատասխանատու կը յայտարարէ Մատէրոյի սպանութեան. — Մեքսիկոյի մէջ այժմ անգործութիւնը սկսած է: — Յեղափոխութեան միջոցին մեռնողներուն թիւը կը հասնի 3,000-ի, որոնց մէջ կը գտնուին նաեւ բաղձալիւ կանայք և տղաք: Իսկ վերաւորեալներուն թիւը իրը 7,000 է: — Ֆէլիքս Տիագ Գորալարը մտած է Մեքսիկո մեծ ու խանդավառ ցոյցերով իր բանակին հետ: Առժամեայ նախագահ Հիւէրթա Զորավարը Մատերոյի Վարչութեան օրով բանտ գրուողներուն ընդհանուր ազատութիւն շնորհեր է: — Մ. արլա Պարրա Հանրապետութեան երեսնի նախագահը հաւանած է վերջնականօրէն կազմել նոր դահլիճը. ինքն եղած է Արտաքին Գործոց նախարար. Կարչիս Կրանտօ՝ Ներքին Գործոց, Ատուֆօ Բէլէս՝ Արդարութեան, Մոնտալբոն՝ պատերազմի, Օպրէսոն Ելեմտից, Ֆիւէնթէս՝ Երկաթուղեաց:

*. Անգղիացի բեւեռախոյզ Աքօթ և իր չորս ընկերները մեռած գտնուած են վերջերս հարաւային բեւեռին մէջ՝ խուզարկու Տ. Աթքինսընի և իր ընկերներուն կողմանէ: Ասոնք Աքօթի և անոր ընկերներուն բոլոր վաւերացումները հաւաքած են և անոնց մարմինները թաղելով անոնց գերեզմանին վրայ խաչ մը անկած են յաւերժական կոթող Անգղիական խիղախ, անտեղիտուլի, արիական կամքին:

Աքօթ իր տեղեկագրին մէջ մանրամասնօրէն կը պատմէ գլուխը եկած դէպքերը: «Պատի կրնայինք վերադառնալ, կը գրէ Աքօթ, եթէ երբեք մեր ընկերներէն Էտկար չհիւանդանար և օդ: շատ գէշ չըլլար: Էտկար Էվանդ մեռաւ ընական մահաւամբ, ուղեգրին խնդումէ մը: 82րդ աստիճանին վրայ օդը ցրեկ ատեն զէրոյէ 30 աստիճան և գիշերը 47 աստիճան վար էր: Պարէնհայտով: Հովը կը փչէր մեր գիմացէն: Օդը յանկարծակի կերպով փոխուած էր և մենք մեր աղետը օդին այս փոփոխութեան կը պարտինք: Ոչ մէկ մարդկային արարած տարած է այնպէս ինչպէս մենք սպրեցանք մէկ ամբար: Բայց հա-

կառակ այս բոլորին պիտի կրնայինք յառաջանալ ե-
թէ մեր ընկերներէն Օաճա չհեռանդանար: Փոթորիկը
մեզ կեցուց պաշարի կայանէն 11 մյոն ասպին, այն-
պէս որ ոչ իսկ երկու կերակուր եփելու չափ վառե-
լանիւթ մնացած էր մեր քովը: Զորս օր ստիպուե-
ցանք մնալ մեր վրանին տակ: Տկարացանք և անկա-
րելի եղաւ: Գրեւը Այս ճամբորդութիւնը զիս չի արդու-
մեցներ, որովհետեւ ասիկա կը ցուցնէ թէ Անգլիացի
մը ինչպէս կը դիմանայ զրկանքներու: Երբէք չեմ
տրտնջոր նախանձամբութենէն: Բայց այն ազգէն, ո-
րուն համար տրամադրած ենք մեր կեանքը, կը
խնդրեմ որ մեզմէ կախում ունեցողներուն ապագան
ապահովուի: Եթէ տպրինք, շատ սրտաճմլիկ պատ-
մութիւններ ունիմ՝ ընելիք, բայց այս պատմութիւն-
ները այլեւս մեր գիտելիքը թող ընեն:»

Ոչ միայն Անգլիոյ խորհրդարանը պատասխանած
է Աթոթի կողմին, այլ անգլ. թերթեր հանգանակու-
թիւն բացած են ի նպատակ դժբախտ զոհերու ընտա-
նիքին: Բեւեռախոյզ Աթոթի բարեկամները աշխարհի
ամէն կողմէն հեռագիրներ կը ստանան, որոնք սրտե-
ղացում կը յայտնեն Անգլիացի բեւեռախոյզին քա-
ջաջութեան համար:

*. Թոմասֆներու Ռուսիոյ գահը բարձրանա-
լուն 300 ամեակը կատարուեցաւ մեծ շքեղու-
թեամբ: Մարտ 6ին: Ներկայ գտնուեցան Ֆրան-
սուա ժողով Կայսեր կողմանէ Բեթերսպուրկի Աւս-
տրիական Դեսպանը, Գերմանիոյ Վիլհելմ Կայսեր
կողմանէ իր որդին Ալթէլ Ֆրիտրիխ, Օսմ. կառավա-
րութեան կողմանէ Բեթերսպուրկի դեսպան Թուրխան
փաշա: Բեթերսպուրկէն կը հաւաստեն թէ Ռո-
մանֆներու երեք հարիւրամեակին առթիւ Ռուսա-
կան և Աւստրիական զինուորները պիտի ցրուին:

*. Գերմանիոյ և Գերմանացի մէջ զինուորական
արտակարգ պատրաստութիւններու կը ձեռնարկուի:

*. Մոնկոլիա և Թիպէթ Զինէն ապստամբելով
իրարու հետ փոխադարձ պաշտպանութեան դաշինք

կռած են, և խնդրած են Ռուսիոյ և Անգլիոյ պաշտ-
պանութիւնը:

*. Ճարմին դահլիճը հրաժարեր է ամբողջին,
կուսակցական դառնադէտ ցոյցերու հետեւանքով:—

Թորիոյի մէջ ահա հրեհ հրդեհ մը աւերակ դարձուցեր
է 3,999 տուն. 15,000ի չափ արկածեալներ անպա-
տրպար մնացեր են:

*. Պ. Տէլգասէ, Գաղղիոյ նախորդ ծովային նա-
խարարը, անուանուած է Դեսպան Ռուսիոյ մօտ:
Զարը այս մասին մեծ գոհունակութիւն յայտնե-
ր: Արասովը կարեւորութիւն կը տրուի այս անուա-
նումին, նկատելով մանաւանդ Տէլգասէի պէս քաջ
քաղաքագէտ և Գերմանիոյ ստիս անձնաւորութեան
մը խաղալիք դերը Զարերու մայրաքաղաքին մէջ:
Գերմանիոյ բոլոր թերթերը ծայր աստիճան վերդոված
են:

*. Ատաիս Ապապպէն կը հեռագրուի թէ Ե-
թովպիոյ կայսրը Մենիլիք, որուն մահուան լուրը
գրեթէ երկու տարիէ ի վեր իրբեւ ստոյգ կը շրջա-
բերուէր, չէ մեռած, այլ կաթուածահար վիճակի
մէջ է և կը պահպանուի մասնաւոր գունդերէ:

*. Լորտերու ժողովը 5 ի դէմ 252 ձայնով
մերժեց է իսպառ անկիզան եկեղեցւոյ և պետու-
թեան բաժանումի առաջարկը: Կայլէօի նահանգին
համար: Կաթողիկէ շրջանակներու մէջ այս մերժումը
մեծ ցնծութիւն յառաջ բերեր է. բոլոր ուրում ասի-
կա գործնական ցոյց մըն է ընդդէմ անջատողական
շարժումին, որ հակաքրիստոնէական սկզբունքէ ծնած
է և յառաջ կը մղուի հակակրօններու կողմէ: Այս
բանս շատ նպաստաւոր տպաւորութիւն ձգեր է նաեւ
բովանդակ անկիզան բողոքական միջավայրերու մէջ,
որոնք ամէն կերպով հակառակ են այդ բաժանումին
և իրենց բոլոր զօրութեամբը նոյնին ընդդիմացան և
յաջողեցան: Այս իրողութիւնը սրբան մտածել տա-
լու է անոնց որ Կաթողիկէ եկեղեցւոյ ծոցին մէջ
գտնուելով հանդերձ աշխարհականացման կը ձգտին:

Բ Ո Վ Ա Ն Դ Ա Կ Ո Ւ Թ Ի Ի Ն

Դէպքեր եւ սկզբունքներ	145
Քաղաք Յիսուսի չարչարանաց վրայ	148
Թուրք Հովաթական	152
Օրմանեանի «Հայոց Եկեղեցի» գիրք	154
Եօթնեակ Բրիտանի	156
Գաթոլիք Մէգնէպի Էսասլար	157
Տեղեկագրական	158

ԱՐՏՕՆԱՏԵՐ




ՏՆՕՐԷՆ-ԽՄԱՍԳՐԱՊԵՏ

ՅՈՎԼ. Ծ. Վ. ԿԵՏԻԿԵԱՆ

ԳԵՆՐԳ Ծ. ՎԱՐԴ. ԹԵՂԻՍԻԱՆԵԱՆ

Տպագր. Կ. Արձագանգ Շաքաբաքեթի, Բերա, Պայրամ փողոց թիւ 5, Կ. Պոլիս



ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԵԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐ.—Թուրքիոյ համար, տարեկան՝ 40 դնկ. արծ. վեցամսեայ՝ 20.—
մէկ թիւ՝ 1 դնկ.:— Արամստիման՝ տար. Քր. 10. վեցամս. 5.—Վհարմունի կանխիկ են:

ՀԱՍՑԷ.— Կարողիկե Արձագանգ, Բերա, 5 Պայրամ փողոց 5, Կ. Պոլիս:

GATOGHIGUÉ ARTZAKANK

Péra, 5, Rue Baïram 5

Constantinople

ԾԱՆՈԹՈՒԹԻՒՆՔ.— 1.—Արձագանգ կը նրաստակուի Շաքար օրերը: 2.— Խմբագրութիւնս պարտաւորեալ չէ անպատճառ կամ նոյնութեամբ նրաստակել իրեն ղրկուած ո՞ր եւ է յօդուած: 3.—Կեղծանունով ղրկուած յօդուածներու հետինակը կը պարտի իր իսկական անունը ծանուցանել Խմբագրապետին: 4.— Ձեռագիրներ եւ չեն դարձուիր: 5.— Յօդուածներու ձեռագիրները պէ՛տք է գրուած բոլոր թուրքի մէկ կողմը միայն: 6.— Ծանուցմանց համար մասնաւոր պայմանագրութիւն կը կատարուին: 7.— Հասցէի փոփոխութեան համար պէ՛տք է անհրաժեշտ երկու դանեկանի նամակագրում ի միասին ղրկել:

ՏՊԱՐԱՆ Կարողիկե Արձագանգի Բերա, 5 Պայրամ փ. 5: Տպարանս ըստ ամենայնի ճշիւ եւ ի վիճակի է որ եւ իցէ տպագրական գործոց համար: Կը ստուին ամէն տեսակ ծանուցումներ, գիրքեր, տետրեր, հրատարակութիւններ, բարդեր, բարդ-տարեւներ, մասագրներ, եւն., եւն.: Գիները անմիջեղի կերպով աման են: Գեղեցկագիտական հասակի եւ տպագրական մատուցման կողմանէ յանձնարարները անտարակոյս գոն պիտի մնան:

ԿԸ ԾԱԽՈՒԻ «Տարեկան Սկզբունք Բրիտանական Վարդապետութեան» հաստատեալ եկեղեցական իշխանութենէ եւ կիրառութիւնը համայնեայ: Բաղկացած է 136 էջերէ: Գին, ամուր թղթակազմը 2 դնկն.:
